ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«04» Դեկտեմբեր 2023թ. N 757-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման 17-րդ հոդվածի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման 19-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի ապրիլի 20-ին կայացած Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցույթի հանձնաժողովի գնահատման թերթիկները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2023 թվականի ապրիլի 20-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ-թերթիկի՝ համաձայն հավելվածի:

2. «Երևան-Բագրատաշեն-Քոբուլեթի» միջպետական երթուղու սպասարկման համար 49,4 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Բասլենդ» ՍՊ ընկերությանը՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 404 QQ 50, 03 JJ 707 և «Դոդջ» մակնիշի 31 CO 031 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երկու տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 9000 դրամ փոխադրավարձով:

3. «Երևան-Մոսկվա» միջպետական երթուղու սպասարկման համար 58 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Ինտեր Տուր» ՍՊ ընկերությանը՝ «Նեոպլան» մակնիշի 80 VR 001, «Մերսեդես-Բենց» մակնիշի 53 MV 555 և «Սետրա» մակնիշի 273 OO 63 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝

սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 18000 դրամ փոխադրավարձով:

4. «Երևան-Բագրատաշեն-Քոբուլեթի» միջպետական երթուղու սպասարկման համար հայտեր ներկայացրած «Բաս Վոյաժ» և «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությունները չեն ներկայացել մրցույթին:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

5/4/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան

Ձև № 7

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
<< >> _____ 2023թ.
N _____ հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ-ԹԵՐԹԻԿ

20 ապրիլի 2023թ.
(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	*Գումարային գնահատականը*			
	ներկայացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
<< Բասլենդ >> ՍՊԸ	*«Երևան-Բագրատաշեն-Քոքուլեթի»*			
	23	6,4	20	49,4
<< Ինտեր Տուր >> ՍՊԸ	*«Երևան – Մոսկվա»*			
	28	10	20	58

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ Խաչիկ Սողոմոնյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)